5. Մամուռներ. Մամուռների բաղմազանությունն ու տարածումը: Կկվի վուշը վորպես տերեացողունավոր մամուռների ներկայացուցիչ: Նրա կազմությունը, բաղմացումը: Տորֆամամուռ, նրա տորֆ գառնալու նշանակությունը: Տորֆի նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ: Հասկացողությունն մամուռների ծագման մասին:

6. Զարխանական առաջնորդությունը և տարածումը: Սովորական ձարխոսությունը, նրա կազմությունն ու բաղմացումը: Զարխոտանմանների ավելի բարձր կազմակերպված լինելը մամուռների համեմատությամբ: Հնադարյան ձարխոտանմանների նշանակությունը քարածության գործում: Քարածին նըշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ: Հասկացողությունն ձարխոտանմանների ծագման մասին:

7. Ներկայակերպությունը. Սովորական սոճին վորպես մերկասերմերի ներկայացուցիչ: Սոճու կազմության առանձնահատկությունը:

Ալական և իռական բաղմացման որգանների կազմությունը: Փոշատումը, բեղմնավորումը և սերմերի զարգացումը: Այլ մերկասերմ բույսեր: Մի քանի մերկասերմերի նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ:

8. Ծածկասերմեր. Փամանակակից ծածկասերմերը վորպես բույսերի իշխող խումբը: Հասկացողություն բույսերի տեսակների, ցեղերի և ընտանիքների ստորաբաժանման մասին: Հասկացողություն ծածկասերմերի սի քանի կարևոր ընտանիքների մասին—զորանածաղիկներ, խաչածաղիկներ, թիթեռնածաղիկներ, բարդագույններ և բանջարեղեններ: Նրանց նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ:

Ծածկասերմերը (վարսանդավոր) վորպես բարձր խմբի բույսեր: Հասկացողություն նրանց ծագման մասին:

Յեղրափակում. Բուսական աշխարհի զարգացումը: Բուսական աշխարհի անփոփոխության մասին յեղած կրոնական պատկերացումների հակագիտականությունն ու վնասակարությունը:

## ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՅՉՉԻ ՀԱՄԱՐ

1. Պրոֆ. ՇԱԳՄԻՄՈՎ.—Բույսուրի Փեղիոլոգիայի համապատ դասընթաց, 5-րդ հրատ. 1936 թ.
  2. Պրոֆ. Լ. Ա. ԻՎԱՆՈՎ.—Բույսուրի Փեղիոլոգիա, 1936 թ. հրատ.
  3. Պրոֆ. ԻՎԱՆՈՎ.—Բույսուրի սիստեմատիկա:
  4. Պրոֆ. ԿԱԽԻՐՅԱՆՈՎ և Պրոֆ. ԳՈՂՅԵՆԴՐԻՆ—Բուսաբանություն Դասագիրք մանկավարժական ԲՈՒՀ-երի համար, 1936 թ. հրատ.
  5. ՄԱԿ-ՔՈՒԳՈԼԼ.—Բույսուրի հկողողիա:
  6. Ա. ՏԻՄԻՐՅՈԶԻՆՈՎ.—Բույսուրի կյանքը:
  7. Կ. Ա. ՏԻՄԻՐՅՈԶԻՆՈՎ.—Հողադրոծություն և բույսուրի Փեղիոլոգիա.
  8. Վ. Լ. ԿՈՄԱՐՈՎ.—Բույսուրի ծագումը:
  9. Վ. Լ. ԿՈՄԱՐՈՎ.—Կուլտուրական բույսուրի ծագումը:
  10. Տ. Դ. ԼԻՍԵՆԿՈ.—Ցարովեղիայի տեսական հիմունքները:
- 

## ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (60 ԺԱՄ)

### Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Կ Ն (1 ԺԱՄ)

Կենդանաբանությունը գիտություն և կենդանիների մասին, փորն ուսումնասիրում և նրանց բազմազանությունը՝ կապված նրանց ապրելակերպի հետ, նրանց ծագման հետ և յերկրի վրա նրանց գոյության վոփոխվող պայմանների հետ:

Կոնկրետ ծանոթացում կենդանաբանական տեսակի հետ. մռատ տեսակների միացումը ցեղերի, մոտ ցեղերն—ընտանիքների, ընտանիքները կարգերի հետ (թոշունների, կաթնասունների, կրծողների, միջատների և այլ որինակների վրա), գասերը և տիպերը վորակես կենդանաբանական կարգաբանության (կլասիֆիկացիա) բարձրակարգ միավորներ։ Կենդանիների սիստեմատիկայի ուսումնասիրման հակակրօնական նշանակությունը վարպես կենդանական տշխարհի բնական պրոցեսի և պատմական գարբացման արտահայտությունն:

### ԿԵՆԴԱՆԻ ՈՐԴԱՆԻՉՄԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ (6 ԺԱՄ)

Կենդանու մաշնի ներքին և արտաքին կազմությունը (գործի վրա փորձելով): Հասկացողություն կենդանու որդանների հիմնական սիստեմների և նրանց գերի մասին:

Սեռական գեղձեր և նրանց արտադրանքը—արական և իդական սեռական բջիջները: «Ամեն կենդանի ձվից են: Հասկացողություն բեղմնավորման մասին՝ արականի սեռական բջիջ (սպերմատոզիդի) միացումը իդականի բջիջի (ձվի) հետ: Բեղմնավորված ձվի կոտորակումը և սաղմի առաջանալը: Բջիջների շերտավորումը (դիֆերենցիացիան)՝ սաղմի զարգացման ժամանակ և հյուսվածքների առաջանալը: Սաղմային շերտեր և հիմնական որդանների հիմնագրումը. վողմնաշարավորների սաղմերի մաս ներվայային գլանիկների առաջանալը և վողնուղեղի ու գլխուղեղի

սաղմի՝ ներվային փողակի գոյանալը: Կենդանիների բջջային կազմությունը վորպես ամբողջ կենդանական աշխարհի միասնականության արտահայտություն: Կենդանու բջի առանձնատակությունները: Միաբջիջ և բաղմաքջիջ կենդանիներ:

### ՆԱԽԱԿԵՆԴԱՆԻԵՐԻ ՏԻՊԱՐ (5 ԺԱՄ)

Նախակենդանիների՝ վորպես միաբջիջ կենդանիների ընդհանուր հատկանիշները՝ ամյուբայի կամ սպարամեցիա ինֆուզորիայի (հողաթափիկի) որինակի վրա: Նրանց կազմությունը (պրոտոպլազմա, կորիդ, պարունակություն) և կենսական գործողությունները (շարժում, սնվել, շնչառություն, արտաթորություն, դրդուկանություն, բաղմացում):

Կանաչ և վերնան վորպես մարակավորների գասի ներկայացուցիչ: Մարակավորների մոտիկությունը միաբջիջ ջրմուռների հետ և կենդանական ու բուսական աշխարհի միջև խիստ սահմանի բացակայությունը, վորը վկայում և նրանց ընդհանուր ծագումը ունենալու մասին:

Հասկացողությունն պարագիտ նախակենդանիների մասին: Մալաբիայի պարագիտը ու նրա դարդացումը մարդու և անոփելես մոծակի մարմնի մեջ:

### ԱՆԱՀԻՆԵՐԻ ՏԻՊԱՐ (6 ԺԱՄ)

Քաղցրահամ ջրի հիդրան վորպես անաղիների ներկայացուցիչ: Հիդրայի կազմությունը, հյուսվածքների դիֆերենցիացիայի սկիզբը: Հիդրայի կենսակերպը՝ բաղմացումը՝ անսեռ և սեռական: Կորցրած մասերի վերականգնման խիստ արտահայտված ընդունակությունը (ոնքեներացիան) կապված նրա մարմնի կազմության հարաբերական միակերպության հետ: Ծովային պոլիպներ և մեղուղաներ. մեղու զայի դարդացումը պոլիպից և նրա կազմության բարդացումը ինքնուրույն կյանքի անցնելուց հետո: Կորալյան պոլիպներ. կրային կմախքի նշանակությունը ալիքահար շոջանում ապրելու կապակցությամբ: Կորալների դերը յերկազնդի կեղեկի գոյացման պրոցեսում:

Անաղիները և սպունգները վորպես ստորին բաղմաքջիջ կենդանիների յերկու հիմնական խմբեր: Գաղութային մարակավորները և բաղմաքջայնության ծագումը: Միաբջջային ստագիան բաղմաքջիջ կենդանիների զարգացման պրոցեսում:

### ՎՈՐԴԵՐԻ ՏԻՊԱՐ (4 ԺԱՄ)

Վորդերի ձեւերի բաղմազանությունը և նրանց բաժանումը առանձին յենթատիպալների: Տափակ վորդերի յենթատիպարը: Ծծողներ: Նրանց առանձնահատկությունները՝ կապված պարագային կենսակերպի հետ: Յերկիզորդ, եխինոկոկի, դրանց զարգացումը: Տերեր փոխելը և դրա կենսաբանական նշանակությունը: Վարդեր-պարագային կենսաբանական դեմքայրելու կենսաբանական հիմունքները: Կլոր վորդերի յենթատիպարը: Ապարիդներ, ոստրիցա, արթիլինա: կապմության զլիսավոր առանձնահատկությունները՝ կապված պարագային կենսակերպի հետ: Վարակման միջոցները և վարակման դեմ կանխիչ միջոցների կենսաբանական հիմունքները:

Ողակավոր վորդերի յենթատիպար: Անձրևավորդը վորպես այդ յենթատիպարի ներկայացուցիչ: Նրա արտաքին ու ներքին կազմությունը՝ կապված նրա կենսակերպի հետ: Ողակավոր վորդերի ավելի քարդ կազմության հատկանիշները՝ մարմնի յերկրորդական խոռոչը, հյուսվածքների և գործարանների սիստեմների դիմերենցիան:

Յերկշերտավոր սաղմի (գաստրոռաներ) ստագիան վորդերի զարգացման պրոցեսում, վորպես հնագարյան աղելորշներից ծագման վկայություն:

### ՓԱՓԿԱՄԱՐՄԻՆԵՐԻ ՏԻՊԱՐ (2 ԺԱՄ)

Անատամը (կամ գետային մարգարիտը) վորպես փափկամարմինների տիպարի ներկայացուցիչ, նրա կազմությունը՝ կապված նրա կենսակերպի հետ:

Թերթախոլիկների դասի ընհանուր գծերն անատամի որինակի վրա, դրանց մի քանի ձևերի արդյունաբերական նշանակությունը:

Փորոտանիների դաս: Յամաքային և ջրային խխունջներ, նրանց արտաքին կազմությունը և կենսակերպը: Խխունջները և կողինջները վորպես զյուղատնտեսության վնասատուներ:

Գլխոտանիների դասը (կարակատներ, կալմարներ, ութոտանիներ) վորպես փափկամարմինների բարձրակարգ խումբը: Գլխանցար արտաքին պատկերը, շարժվելու ձեր և կենսակերպը: Կլոռտանիների ծաղկման շրջանը յերկրի կյանքի անցած ժամանա-

կաշվաններում (ամոնիտներ, բելմենիտներ) և դրանց հետագա  
վոչնչացումը,

Փափկամարմինների նշանակությունը կրի շրջանառության  
և նստվածքային ապառների դրյացման մեջ:

Փափկամարմինների ջրային թրթուրների և ողակավոր վոր-  
դերի ջրային թրթուրների նմանությունը վորպես վկայություն  
նրանց ընդհանուր ծագման:

## ՀՈԴՎԱԾՈՏԱՆԻՆԵՐԻ ՏԻՊԱՐ (16 ԺԱՄ)

Գետի խեցգետինը վորպես հոդվաճուտանիների տիպարի  
ներկայացուցիչ. նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կտպ-  
ված կենսակերպի հետ. Կազմության բարդացումը՝ համեմատած  
ողակավոր վորպերի հետ, խիտինային ծածկութը և հոդվաճակոր  
վերջավորությունները վորպես հոդվաճուտանիների բնորոշ առանձ-  
նահատկություն: Մարմնի տարրեր հատվածների վերջավո-  
րությունների ձեափոխությունները՝ կապված դրանց տարրեր  
ֆունկցիաների հետ:

Հոդվաճուտանիների տիպարի բաժանումն առանձին զասե-  
րի: Խեցգետնակերպերի դասի ընդհանուր հատկանիշները: Ստո-  
րակարգ խեցգետնակերպեր (դաֆնիաներ և ցիկլոպներ) և դրանց  
նշանակությունը բնորոշյան ընդհանուր կյանքում և ձկնատըն-  
տեսության մեջ:

Մարդակերպերի դասի և բազմուտանիների դասի արտա-  
քին կազմության ու կենսակերպի գլխավոր բնորոշ առանձնահատ-  
կությունները:

Միջատների դասը: Միջատների արտաքին և ներքին կազ-  
մությունը: Բազմացման և դարձացման առանձնահատկություն-  
ները: Լրիվ և թերի կերպարանափոխվող միջատներ: Հասկացո-  
ղություն միջատների գլխավոր կարգերի մասին և նրանց հա-  
մառությունը բնորոշումն ըստ իրենց թերերի և բերանի մասերի  
կազմության ու կերպարանափոխման յեղանակի:

Միջատների ձեերի բազմաքանակությունը և կյանքի տար-  
բեր պայմաններին հարմարվելու բազմադաշնությունը: Պաշտ-  
պանողական գունավորումը միջատների մոտ (հովանավորող,  
նախազգուշացնող, միմիկրիա): Այդ հարմարանքների հարաբե-  
րական նշանակությունը և նրանց մեջ նախասկզբնական նը-  
պատականարմարության բացակայությունը: Այսպես կոչված

«հասարակական» միջատներ: Մեղու. նրա կենսաբանական  
առանձնահատկությունները և ոգտագործումը մարգու կողմից:  
Մեղի ընտանիքի ծագման հարցը (մենակյաց մեղուներ, իշա-  
մեղուներ):

Միջատների նշանակությունը բնության կյանքում և մար-  
դու անտեսության մեջ: Միջատները և ծաղիկները: Գյուղատըն-  
տեսության վկասատու միջատներ: Հիվանդություններ տարա-  
ծող միջատներ: Միջատների քանակության տատանումներն ա-  
ռաջացնող բնական պատճառները (վնասատուների մասսայա-  
բար հայտնվելը և դրան հետևող անհայտացումը և այլն): Վնա-  
սատու միջատների կենսաբանության գիտական ուսումնական ա-  
ռաջատընությունը:

Պարագիտ միջատների (հեծյալների և տախին-ձանձի)  
գործունեյության ոգտակարությունը մարդու համար: Վնասատու  
միջատների դեմ պայքարելու կենսաբանական հիմունքները:

Միջատների կապը ողակավոր վորդերի հետ: Միջատների  
թրթուրների վորդաճման կազմությունը և նրանց պարզ ար-  
տահայտող ներքին սեպմենտացիան վորպես ապացույց, վոր նը-  
րանք ծագել են ողակավոր վորդերից՝ հնագարյան բազմուտանի-  
ների միջացուի:

## ՓՇԱԾՈՐԹՆԵՐԻ ՏԻՊԱՐ (1 ԺԱՄ)

Ծովաստղը վորպես փշամորթների տիպարի ներկայացու-  
ցիչ. նրա արտաքին տեսքը և կենսակերպը: Զրատար սիստեմը  
վորպես փշամորթների բնորոշ առանձնահատկություն: Հասկա-  
ցողություն փշամորթների տիպար կազմող առանձին դասերի  
մասին: Փշամորթների դարձացումը յերկամբետրիկ թրթուրներից:  
Փշամորթների հնագույն ձեերը (ծովախնձորներ, ծովաշուշներ) և նրանց ձառագայթաձև սիմետրիան վորպես նատակայոց  
կյանքի հետ կապված հատկանիշ:

## ԼԱՐԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՊԱՐ (4 ԺԱՄ)

Վողնաշարավորների համառոտ նախնական բնութագիրը  
վորպես մի խմբակի, վորը միխավորում և լարավոր (խորդավոր)  
կենդանիների ճնշող մեծամասնությունը: Վոռկբավոր ձուկը  
վորպես ջրային սկզբնական վողնաշարավորների ներկայացու-  
ցիչ. նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կապված նրա

Ջրային կենսակերպի հետ: Աներքին կմախըը (փողնաշարը և գանգը) վորպես վողնաշարավորների բնորոշ առանձնահատկություն:

Կրծիկային կմախըը ունեցող ձկները (թառափաղիներ, չնաձկներ) վորպես վողնաշարավորի կազմակերպման ստորին ձեր: Խորդան կամ մեջքի լարը վորպես սոորակարգ ձկների ներքին կմախքի հիմք: Խորդայի աստիճանական արտամղումը վողնաշարի կողմից բարձրակարգ ձկների մոտ նրանց զարդացման պրոցեսում:

Նշտարածուկը վորպես ձկների հին նախանայերին մտտիկ ձեւ, վողնաշարավորի և նշտարածկան՝ այս առնողնաշար վողնաշարավորի միջև յեղած նմանությունն ու տարբերությունը: Անդանական աշխարհի նախակին բաժանումը վողնաշարավորների և անողնաշարավորների: Այդպիսի բաժանման անբավարար լինելը ժամանակակից գիտության ավյաների տեսակետից և լարավորների տիպարը սահմանելը:

Լարավորների (խորդավորների) տիպարի ընդհանուր բընութագիրը, 1) լարի առկայությունը, 2) Սեջքի ներփային խողովակը, 3) խորիկային ճեղքերի առկայությունը: Լարավորների բաժանումը գանգակուրկների և վողնաշարավորների յենթատիպարների: Վորդերի և նշտարածկան վաղսաղմային ձերը (յերկշերտ սաղմեր) նմանությունը վորպես ապացույց դրանց ընդհանուր ծագման հնագույն անաղիներից:

### ԶԿՆԵՐԻ ԴԱՍ (3 ԺԱՄ)

Ձկների դասի ընդհանուր բնութագիրը և նրա բաժանումը կարգերի ձեղքախորիներ (կամ ընդլայնաբերաններ) և թառափաղիներ. այդ կարգերի հարաբերական հնությունը և նրանց ներկայիս տարածումը: Վոսկրավոր ձկները վորպես ավելի նորագույն խումբ, վորն իր ծաղկմանն և հասել յերկը կյանքի արդի ժամանակաշրջանում:

Ձկների արտաքին տեսքի բազմազանությունը՝ կազմված տարբեր կենսակերպի հետ և բնական ընտրության հետ (հատակում ապրող և բարձրալող ձկներ, «խաղաղ» և դիշատիչ ձեր): Ջրի խորքում ապրող ձկների առանձնահատկությունները):

Ձկների բազմացումը. ածած ձկների քանակի և սերնդի պաշտպանության բնադրի միջև յեղած կապը: Արհետավործա-

կան ձկնորսությունը և նրա կապը ձկան կյանքի սեղոնային յերկույթների (ձկնորսություն շրջան) հետ: Ծովային ձկնորսությունը և նրա զարգացումը ԽՀՀՄ-ի սոցիալիստական տնտեսության պայմաններում: Ձկնորսություն և լճային տնտեսություն:

### ՅԵՐԿԱՆՑԱՂՆԵՐԻ ԴԱՍ (2 ԺԱՄ)

Գորտը վորպես յերկենցաղների դասի ներփայացուցիչ: Նրա արտաքին և ներքին կազմությունը, գորտի համեմատությունը ձկան հետ և նրա առանձնահատկությունները՝ կազմված ջրից ցամաք գուրս զալու հետ: Ջրամբարի առկայությունը վորպես գորտի գոյության անհրաժեշտ պայման: Շերեփուկի՝ ձկնակերպ կենդանու ստաղիան վորպես յերկենցաղների պատմական զարգացման արտահայտություն: Պոչափը և անպոչ յերկենցաղներ: Հնագույն յերկենցաղներ՝ ստեղծոցեֆալներ և նըրանց կապը հին վրձնալողակ ձկների հետ: Նրանց յերեան գալը նախապատրաստող պայմանները: Յերկենցաղների ծաղկած վիճակը քարածիսային դարաշրջանում («յերկենցաղ» բուսականության զարգացման հետ միաժամանակ), յերկենցաղների վոչ կատարյալ հարմարվածությունը ցամաքալին կենսուկերպին:

### ՍՈՂՈՒՆՆԵՐԻ ԴԱՍ (2 ԺԱՄ)

Սողեսը վորպես սողունների դասի ներփայացուցիչ: Նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կազմված նրա կենսակերպի հետ: Սողունների տարբերությունը յերկենցաղներից և նըրանց ավելի բարձր կաղմակերպվածության նշանները: Սողունների բազմացման առանձնահատկությունները, վորոնը պայմանավորել են նրանց լրիվ ցամաքային կյանքի անցնելու հընարավորությունը:

Սողունների բաժանումը կարգերի և նրանց համառոտ բընութագիրն առանձին ներփայացուցիչների որինակի վրա (մողեսներ, ոձեր, կոկորդիլոսներ, կրիաներ):

Սողունների ծագումը ստեղծոցեֆալներից: Ժամանակակից մողեսների գաղաթային աչքը վորպես հին ստեղծոցեֆալներից և վրձնալողակ ձկներից ժառանգած առանձնահատկություն: Սողունների ծաղկած վիճակը և բազմազանությունը յերկը կյանքի միջին դարաշրջանում և հետագայում նրանց վոչնչացումը:

## ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԴԱՍ (6 ԺԱՄ)

Թոչունների արտաքին և ներքին կառուցվածքի առանձնահատկությունները՝ կապված նրանց կինսակերպի հետ (կոնկրետ որինակով):

Արտաքին նկարագիրը (փետրավորումը, կտուցը, վոտները, պարանոցի ձկունությունը՝ յերբ իրանը համարյա լրիվ կերպով անշարժ է):

Ներքին գործարանները: Թոչունների կմախքի առանձնահատկությունները: Առջնի և հետին վերջավորությունների մասնագիտացումը. թերերի աշխատանքը թուիչքի ժամանակ, թոչունների և սողունների կազմության ընդհանուր գծերը նըրանց հարմարանքային հատկանիշների տարրերության պայմաններում:

Զու. նրա կազմությունը, Սաղմի զարդացումը ձվի մեջ, Խոփկային ճեղքերի սուրիմենտները վորպես վկայություն, վորցամաքային վողնաշարավորները ծաղկել են հին ջրային ձևերից. Թոչունների և սողունների սաղմի նմանությունը, վորը ցույց և տալիս նրանց մոտիկ աղքակցությունը,

Վոչնչացած նախաթոչունները վորպես կապող ողակ թըռչունների և սողունների միջին: Խսկական թոչունների ծաղկումը յերկը կյանքի նոր դարաշրջանում, նրանց կինսական առավելությունները հանդեպ նախորդ դարաշրջաններում ապրած թեւկավոր մողենների (տաքարյունություն, փետրավորում, թերերի ավելի կատարելագործված կառուցվածք), թոչունների դասի ձեւվերի բազմազանությունը՝ կապված միջավայրի և կերի հայթայթման ձևերի հետ, վորպես բնության մեջ կատարված ավելի հարմարվողների ընտրության արդյունք:

Թոչունների բազմացումը: Զվի գունավորման և ձեր կենսաբանական նշանակությունը: Թոչուններ՝ վորոնց ձագերը ձվից դուրս դալուն ակես ընդունակ են շարժվելու և ինքնուրույն կերակրվելու և թոչուններ՝ վորոնց ձագերը լինում են անպաշտապան և խնամքի կարոտ: Թոչունների չուն նրա կինսաբանական նշանակությունը և ծագումը:

## ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԴԱՍ (10 ԺԱՄ)

Կաթնասուն կինդանիների առանձնահատկությունները համեմատած վողնաշարավորների մյուս դասերի հետ (կոնկրետ որինակով): Արտաքին և ներքին կազմությունը, բազմացումը

և զարգացումը: Կաթնասունների ու թոչունների հատաքարյությունը» և ուղեղի ավելի բարձրաստիճան զարգացումը, վորոնց պատճառով այդ կենդանիներն ավելի պակաս չափով են կախված արտաքին պայմանների փոփոխականությունից, պաղարյունաց վողնաշարավորների համեմատառությամբ: Կաթնասունների ձևերի բազմազանությունը՝ կապված կենսակերպի և միջավայրի հետ, վորոնք ստեղծվել են պատճառական կարդացման հետեւանքով, կապված շրջապատող միջավայրի փոփոխվող պահանջների հետ:

Միանցքանիների կամ ձվածինների յինթաղասը (բաղակառուց, յեխիդնա) վորպես կաթնասուններին և սողուններին միացնող վոչնչացող լոմբակ:

Պարկավորների յինթաղասը վորպես կաթնասունների զարգացման ավելի բարձր աստիճան (համեմատած միանցքանինների հետ): Պարկավորների ժամանակակից տաքածումը և նրանց ցեղեւկերի բազմապանությունը Ավստրալիայում, այդ մայրացամաքի վաղուց բաժանվելու առնչությամբ:

Բարձրակարգ կամ ընկերքավոր կաթնասունների յինթաղասը: Բարձրակարգ կաթնասունների արագ ծաղկումն ու մասնագիտացումը՝ յերկրագնդի կյանքի նոր դարաշրջանում:

Միաշատակերների կարգը վորպես մի խմբակ, վորը պահապանել ե իր ավելի մոտիկությունը հին բարձրակարգ կաթնասունների ընդհանուր նախաճայրերի հետ (ատամների թուլ դիմերենցումը, փոքր չափերը),

Զեռքաթեայինների կարգը վորպես մասնագիտացած (թոչունը ընդունակության կապակցությամբ), միջատակերներին մոտիկ լոմբակ:

Կրծողների կարգը վորպես առավելապես բուսական կերակրով սնվելուն հաջմարված խմբակ: Կրծողների կենսաբանական առանձնահատկությունները, վորոնց շնորհիվ նրանք ներկայարաշրջանում հատել են ծաղկած վիճակի: գյուղատնտեսության վնասատու կրծողներ:

Գիշատիչների կարգը և այդ կարգի մեջ մտնող պլիսավորը ընտանիքները: Թիավատանիների և կետանմանների կարգը վորպես գիշատիչ կաթնասունների խիստ փոփոխված և մասնագիտացված ազգակից:

Սմբակավոր կաթնասունների ծաղկած վիճակը՝ կապված բաց տափաստաններ առաջանալու հետ. անհետացած քիչ մաս-

Նազիտացված նախասմբակավորները (Քենակող) և ժամանակակից միասմբակավորների ու յերկամբակավորների կարգի զարգացումը: Կնճիթավորների կարգի առանձնահատկությունները և նրանց ծագումն ավելի մանր և ավելի քիչ մամնակիտացած ձևերից:

Պրիմիտների կարգը. Նրանց առանձնահատկությունները և մոտիկությունը միջատակերներին: Կապիկները վորպես մաղլցող կենդանիներ: Մարդը վորպես պրիմիտների կարգի անդամ. մարդու կառուցվածքի այն գծերը, վորով նա տարբերվում է կենդանիներից:

### ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ (5 ԺԱՄ)

Կենդանական աշխարհի եվլյուցիոն դարգացման գլխավոր մոմենտները և հիմնական ուղիները (ուսումնասիրված նյութի հիման վրա): Մարդու գործունեությունը վորպես ըստ ժամանակի նոր ֆակտոր կենդանական աշխարհի եվլյուցիոնի մեջ: Կենդանիների ընտելացումն ու ընտանեցումը (կապված գլխավոր տնային ցեղերի ծագման հարցի հետ). կենդանու հատկանիշների և տնահետական վորպակի փոփոխումը՝ շնորհիվ արհետական ընարության կիրառման: Մորթու գագանաբռնեցությունը վորպես անասնաբուծության նոր բնագավառ: Բնական ռեսուրսների պաշտպանության խնդիրներ և կենդանական աշխարհի վերակառուցումը սոցիալիստական տնտեսության պայմաններում:

### ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՍԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Դորտի հերձումը:

Դորտի մաշկի և ուրիշ հյուսվածաբանական պրեպարատների նայումը միկրոսկոպի տակ:

Միկրոսկոպի տակ նայել ինֆուզորիաներ և ծովամոմեր (ժգուածիկավոր):

Կենդանի հիդրայի դիառումը:

Անձրևավորդի հերձումը:

Անատամավորի հերձումը:

Դետի խեցգետնի կամ խոշոր միջատի (ու տարականի) արտաքին զննումը և հերձումը:

Ջկան արտաքին զննումը և հերձումը:

Թոչունի արտաքին զննումը և հերձումը:

Կաթնասունների հերձումը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉՈՒ ՀԱՄԱՐ

ԲԵԼՅԱՅԵՎ, Մ. Մ. Յեկ. ԿՐԵՄԵՆԵՑԿԻ Ն. Գ. — Կենդանաբանության մեջ բողոքական առաջարկությունների կենդանաբանության դասակարգը. 1937 թ.:

ԴՈԴԵԼ, Վ. Ա. — Անողնաշաբավորների կենդանաբանության դասակարգը. 1937 թ.:

ԿԱՇԿԱՐՈՎ, Դ. Ն. ՅԵԿ. ԱՌԱՆՉԻՆՅԱԿԻ Վ. Վ. — Վորոնաշաբավոր կենդանիների կենդանաբանության կուրսը. 1935 թ.:

ՈՂՆԵՎ, Ս. Ի. — Վորոնաշաբավորների կենդանաբանության դասագիրք. 1934 թ.:

ԲԳՆԵՎ, Ս. Ի. — Կենդանաբանություն: Զենոնակ միջնակարգ գովորների դասառուների համար. 1937 թ.:

ՄԱՏՎԵՅԵՎ, Բ. Ս. — Կենդանաբանության կուրս. 1937 թ.:

ՄԵՐԵԲՐՈՎՅԻ Պ. Վ. — Արգանական աշխարհի սպատմությունը. 1932 թ.:

ՄԵՎԵՐՅԱԳ, Ա. Յ. Եվլյուցիոն պրոցեսի գլխավոր ուղղությունը. 1934 թ.:

ԴԵԳՈՒՄԻՔ Վ. Գ. — Անձի եվլյուցիան ձկնից մինչեւ մարդը. 1934 թ.:

# ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱՆ ՅԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՆ (50 ԺԱՄ)

Ն Ե Բ Ա Ծ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն (1 ժամ)

Հասկացողություն մարդու անառոմիայի և ֆիզիոլոգիայի առարկայի մասին և այդ գիտությունների նշանակությունը գործնական կյանքում:

Մարդու մարմնի կազմության և գործունեյության ուսումնակրության ուղիները: Մարդու և կենդանիների մեջև յեղած նմանությունն ու տարբերությունն:

Աշխատանքը վորպես անհրաժեշտ պայման մարդու գոյության համար:

## ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ԲԶՋԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ (4 ԺԱՄ)

Բջջի կազմությունը — պրոտոպլազմա, կորիզ, կորիզակ: Բուսական և կենդանական բջիջի նմանություննը: Բջիջների բազմանալը՝ ուղղակի և անուղղակի բաժանում: Կենդանիների և մարդկանց մարմնի մեջ յեղած բջիջների բազմանանությունը:

Հյուսվածքների տեսակները՝ եպիթելիալին, շարակթական, (վասկորային, կրծկային, ճարպային, թելավոր), մկանային (հարթ և ընդլայնական—շերտավոր), ներվային.

## 2. ՎՈՍԿՐԱՄԿԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ (6 ԺԱՄ)

Կմախքը վորպես մարմնի ամուր հենարան: Վոսկրների տեսակները՝ վոսկրի կառուցվածքը՝ վերնոսկը, խտացած և սպունգային նյութ, վոսկրածուծ:

Վոսկրի բաղադրությունը — որգանական և անօրգանական նյութեր:

Վոսկրի զարգացումը և աճումը:

Վոսկրների միացումը: Հոգերի կազմությունը:

Կմախքի կազմության ընդհանուր տեսությունը — դանդ,

վողնաշար, կրծքավանդակ, կոնքային և ուսային գոտիներ, վերջավորություններ:

Մարդու և վողնաշարավոր կենդանիների կմախքի կազմության նմանությունը:

Կմախքի կազմության առանձնահատկությունները՝ նրա մարմնի ուղաձիգ դիբքի կապակցությամբ:

Կմախքի նշանակությունը վորպես շարժողության պասսիվ ապարատ:

Մկաններն իրեն շարժման ակտիվ ապարատ:

Կծկելը վորպես մկանների հիմնական հատկություն:

Մարդու մարմնի գլխավոր մկանները և նրանց աշխատանքը:

Մկանային աշխատանքի ժամանակ մկանի մեջ կատարվող ֆիբրակական և քիմիական փոփոխությունները:

Աշխատանքի և ֆիբրակական վարժությունների նշանակությունը վոսկրամկանային համակարգության զարգացման համար:

## 3. ՍՆՈՒՆԴ ՅԵՎ ՄԱՐՍՈՂՈՒԹՅՈՒՆ (4 ԺԱՄ)

Սնունդը և նրա նշանակությունը վորպես նյութի և եներգիայի աղբյուր մարդու մարմնի համար: Սնունդի բաղադրությունը, գլխավոր մնագանյութերը՝ սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, վիտամիններ: Սնունդի վերամշակումը մարսողական գործարաններում և դրա նշանակությունը: Հասկացողություն ֆերմենտների մասին:

Մարսողության աղարարատի կազմության ընդհանուր տեսությունը:

Սնունդի մարսողությունը բերանի խոռոչում, կուլ տալը, մարսողությունը ստամոքսում և բարակ ու հաստ աղիքներում: Ներծծում: Լարդի դերը:

## 4. ԱՐՅՈՒՆ ՅԵՎ ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ (6 ԺԱՄ)

Արյան բաղադրությունը — արյան պլազմա, կարմիր և սպիտակ արյան մարմնիներ, արյան թիթեղներ: Արյան մակարդիկը:

Արյան նշանակությունը մարդու որգանիզմի համար:

Հասկացողությունը արյան պաշտպանողական հատկության և վարակի գեմ պայքարելու մասին: Հասկացողություն իմունիտետի մասին: Ավիշը և նրա բաղադրությունը:

Արյան շարժումը մարմինի մեջ: Սրտանթային սխառեմի կազմությունը, սրտի կազմությունը և նրա աշխատանքը:

Մարդու կատարած զանազան աշխատանքների աղղեցության տակ սրտի գործունեյության մեջ առաջացող փոփոխությունները:

Արյան շարժումն աբյունատար անոթներով. դարձերակ (պույլս):

### 5. ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ (3 ԺԱՄ)

Մարդու շնչառության գործարանների կազմությունը: Շնչառության մկաններ, կոկորդ, շնչափող, շնչափողի ճյուղավորությունները թոքերում (բրոնխներ), թոքեր: Սրտաշնչման և ներշնչման մեխանիզմը:

Գազերի փոխանակումը թոքերում:

Արյան գերը ածխաթթու գազի և թթվածնի փոխադրության մեջ որգանիզմում: Գազափոխանակումը հյուսվածքների մեջ: Տարբեր աշխատանքի աղղեցության տակ շնչառության գործարանների գործունեյության մեջ առաջացող փոփոխությունները:

Թունավոր նյութերի ներգործությունը շնչառության որդանների վրա:

### 6. ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՑԵՎ ԵՆԵՐԳԻԱ (3 ԺԱՄ)

Հասկացողություն որգանիզմում կատարվող ասսիմիլացիայի և դիստիլիացիայի մասին: Այդ գործողությունների միասնությունը, վորը կազմում և նյութերի փոխանակման եյությունը: Նյութերի փոխանակությունը և վերածվելն եներգիայի իրեն որպանիզմի հիմնական կենսական ֆունկցիա:

Սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի փոխանակումը: Սննդանյութերի կալորիականությունը: Հանքային նյութերի և ջրի փոխանակությունը:

Վիտամիններ: Սննդառության առողջապահությունը:

### 7. ԱՐՏԱԲՈՐՈՒԹՅՈՒՆ (2 ԺԱՄ)

Նյութափոխանակման վել ջնական արտադրումներ և դրանց արտաթորման անհրաժեշտությունը: Միզատար ապարատի կազմությունը: Ցերիկամների աշխատանքը: Մեղի բազադրությունը:

Միզափամկուշակ դերը:

Մաշկը և թոքերը վրապես աբսաթորության զործարաններ: Թուժինքը և նրա բաղադրությունը: Զերծության արձակումը մաշկի մակերեսից՝ տաքեր պայմաններում: Մաշկի առողջապահությունը:

Թունավոր նյութերի աղղեցությունը մաշկի վրա:

### 8. ՆԵՐՔԻՆ ՍԵԿՐԵՑԻԱՅԻ ԳԵՂՁԵՐ (4 ԺԱՄ)

Տարբեր բջիջների և հյուսվածքների քիմիական փոխադրությունները որգանիզմում:

Ներքին սեկրեցիայի գեղձերը և նրանց առանձնահատկությունները: Հասկացողություն հորմոնների մասին:

Ներքին սեկրեցիայի վահանաձև գեղձի, ուղեղալին հավելվածի, մակյերիկամների, յենթաստամոքսային գեղձի և սեռական գեղձերի նշանակությունը:

### 9. ԲԱԶԱՄԱՑՈՒՄ ՑԵՎ ԱՑՈՒՄ (2 ԺԱՄ)

Սեռական որդաններ: Սեռական գեղձեր և նրանց կողմից արտադրվող սեռական բջիջները: Զվարդիլ և սպերմատոզօֆ:

Բեզմավորումը և սաղմի զարգացումը: Տարբեր տեսակի սաղմերի կազմության և զարգացման նմանությունը և աստիճանաբար առաջացող տաքերությունները: Այդ փաստերի կարեվորությունը եվլուցիոն ուսումնառների համար: Անող որդանիզմի առանձնահատկությունները: ասսիմիլացիայի գործողությունների գերակշռությունը: Հափերի և կշռի ավելացումը:

### 10. ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ (8 ԺԱՄ)

Նյարդային համակարգության նշանակությունը: Նրա կազմության ընդհանուր տեսությունը: Նյարդային համակարգության հիմնական հատկությունը՝ զրդումականություն և հազարդականություն:

Հասկացողություն զրդուման մասին:

Վողնուղեղ, նրա կազմությունը: Ծայրամասային նյարդ: Հասկացողություն ուղիղեքսի մասին:

Գանգուղեղի կազմությունը: Աւղեղի բունը, փոքր ուղեղ, դանդուղեղի նյարդերը: Աւղեղի բնի փունկցիան: Ցերկայնաձիգ

ուղեղին նշանակությունը ներքին սրբանների կանոնավորման  
գործում Փոքր ուղեղը և նրա դերը;

Հասկացողություն վեգետատիվ նյարդային համակարգու-  
թյան մասին:

Գանգուղեղի կիսագնդերը՝ Նրանց կաղմությունն ու նշա-  
նակությունը: Պավլովի ուսմունքը պայմանական և վոչ պայ-  
մանական ռեֆլեքսների մասին:

Զգացողության և շարժողության ամենաբարձր կենտրոն-  
ները գանգուղեղին կեզեի մեջ:

Խոսք և նրա կենարոնները:

Գանգուղեղի կիսագնդերը վորպես մաքի գործարան:

### 11+ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐ (5 ԺԱՄ)

Զգայարանները վորպես արտաքին աշխարհը ճանաչելու  
գործարաններ:

Աչք. նրա կազմությունը, ցանցաթաղանթի նշանակու-  
թյունը:

Հսկության գործարանը և ճայնի ընդունումը:

Չայն և խոսք: Հնչյունների առաջանալը կոկորդում:

Հոտոտելիք և ճաշակելիք:

Մաշկային զգացողությունը. ջերմության զգացումը, շոշա-  
փելը և ցայի զգացումը: Մկանային զգացողություն: Մաշկա-  
յին և մկանային զգացողության դերը աշխատանքային պրո-  
ցեսում:

### ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ (2 ԺԱՄ)

Աշխատանք և որդանիզմ: Ուժասպառություն և ճողնածու-  
թյուն: Տարեկ գործարանների և համակարգությունների մաս-  
նակցությունն աշխատանքի պրոցեսում: Գրտակցության դերը  
աշխատանքային գործունեության մեջ: Դեպի աշխատանքը զի-  
տակցական վերաբերմունքի նշանակությունը սոցիալիզմի պայ-  
մաններում:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՅՉՈՐ ՀԱՄԱՐ

1. ԳՐԱՅ. ԲԱԲԱԿԻ. — Մարդու ֆիզիոլոգիան: Դասագիրք մանկ. ԲՈՒՀ-ՆԵՐԻ հա-  
մար, 1936 թ.:

2. ԻԵԲԵՐ. — Մարդու ֆիզիոլոգիան:

3. ՊՐՈՖ. ԼԻՍԵՆԿՈՎ. — Մարդու անատոմիան:

## ԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔ (45 ԺԱՄ)

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն (1 ԺԱՄ)

Եվոլյուցիոն տեսությունը կենսաբանության մեջ վորպես  
դիալեկտիկ-մատերիալիստական աշխարհայացքի բնագիտական  
հիմունք:

Եվոլյուցիոն տեսության նշանակությունը կենդանաբու-  
ծության և բուսաբուծության սոցիալիստական վերակառուցման  
գործում:

### ԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻ- ՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ (4 ԺԱՄ)

Եվոլյուցիայի ապացույցները հնեաբանության բնագավա-  
ռոց: Կենդանական և բուսական աշխարհի փոփոխությունները  
յերկրաբանական տարբեր դարաշրջաններում: Բարձր ձևերի ա-  
վելի ուշ յերեան դարը յերկրի վրա՝ ստորին խմբերի համեմա-  
տությամբ: Այսպես կոչվող «ճավաքաբական ձևերը», փորոնք իրենց  
մեջ պարունակում են ավելի հին և ավելի նոր խմբերի համ-  
եանիշները (նախաթուչուններ): Ձևերի բրածո շարքերը (ձիու-  
նակինները) և միասմբականիների ծագումը):

Ապացույցներ համեմատական անատոմիայի բնագավառից:  
Հոմոլոգիկ և անալոգիկ սրբաններ (վողնաշարավորների տար-  
բեր դասերի վերջավորությունները, թուչունների և միջատ-  
ների թերթը): Ռուգիմինտար գործարաններ և նրանց նշանակու-  
թյունը (ձիերի «քարե» վոսկրիբը, թուշունների թերթի վրա յե-  
ղած մատների ուղղիմենտները և այլն):

Կենդանական աշխարհի տարբեր լմբրերը միմիաց հետ  
կապող անցողիկ ձևերը (ավտարալիստական միանցքանիները, թա-  
քավոր ձևերը, բազմալողակր և այլն):

Կառուցվածքի նմանությունը վորպես տվյալ խմբի կենադանիների կամ բույսերի ընդհանուր ծագման հետևանքը: Կառուցվածքի ընդհանուր նմանությունը միենույն դասի կամ միենույն տիպի սահմաններում (կոնկրետ որբնակի վրա):

Բույսերի և կենդանիների բջջային կազմությունը վորպես վողջ որբանական աշխարհի բազմազանության մեջ յեղած միանության արտահայտություն:

Եվոլյուցիայի ապացույցներ սաղմնաբանության բնագավառությունը: Զվիր միաբջիջ ստաղիան վորպես յելակետային մոմենտ յուրաքանչյուր բազմաբջիջ որբանիզմի դարպացման մեջ: Զվիր տրոհումը (կոտորակվելը): Սաղմերի դարպացման սկզբնական ստաղիաների նմանությունը վորպես բացատրություն բազմաբջիջ կենդանիների բնդիանուր ծագման:

Տարբեր վողնաշարավոր կենդանիների սաղմերի նմանությունը, կառուցվածքի այն գծերը, վորոնք բարձրակարգ կենդանիների սաղմերին մոտեցնում են ստորակարգ կենդանիներին և ավելի նախնական ձևերին (խորդա, խոփկային գեղձեր): Մյուլլեր-Հեկելի «հիմնական բիոդենտիլ որենքը» և նրա արժեքն անհատի դարպացման և տեսակի դարպացման միջև յեղած կապն ըմբռնելու համար: Անհրաժեշտ վերապահումներ և ուղղումներ բիոգենետիկ որենքի վերաբերյալ (սաղմի հարմարվելը, առանձին ստաղիաների կը ճատկվելը, շեղումներ առանձին որդանների դարպացման մեջ):

Եվոլյուցիոն պրոցեսն ապացուցելու և տարբեր ձևերի ու խմբերի ազգակյության աստիճանի հարցը լուծելու համար գործադրվող ուսումնասիրության տարբեր մեթոդները:

## ԴԱՐՎԻՆԻԶՄ (16 ԺԱՄ)

Դարվինի տեսությունը վորպես կենդանական և բուսական աշխարհի եվոլյուցիայի ժամանակակից ուսմունքի հիմք:

Դարվինի նտխորդները: Լամարկը և նրա տեսության հիմնական դրույթները: Եվոլյուցիոն պրոցեսի լամարկային բացատրության սնանկությունը, «աստիճանաբարման» (պրադացիա) ձգտում ունենալու և անձեռական ջանքերի նշանակության մասին նրա պատկերացման վիտալիստական և իդեալիստական բնույթը, ձեռք բերած հատկանիշների ժառանգման անհնարի-

նությունն ըստ ժամանակակից երսպերիմենտալ գիտության տվյալների:

Դարվինիզմի հիմունքները: Խոշոր պյուղատնտեսության ալրակտիվայի մեթոդներն ու նվաճումները վորպես Դարվինի թեորիայի գլխավոր հենակետերից մեկը:

Փոփոխականությունն ու ժառանգականությունը վորպես անային կենդանիների և կուլտուրական բույսերի տեսակների մշակման համար մարդու կողմից կատարած արհեստական ընտրության հիմունք: Ընտրության տարբեր ուղղությունները: Ցայցին ցեղերի և կուլտուրական տեսակների բազմազանությունը վորպես ժառանգական փոփոխությունների աբհեստական ընտրության արդյունք:

Բնության մեջ կատարվող ընտրությունը: Բազմացման պրոցեսիան և կենդանի եյակների մասսայական կորուստը: Գոյության պահպանման և ամենից ավելի հարմարվածների կենդանի մնալու համար մղվող պայքարը ընտրության հետեւանքով: «Գոյության կորիվ» հասկացողության ընդարձակ իմաստը, ներառյալ վոչ միայն կորիվը, այլ և փոփոխարաբերությունների ամրող բարդությունը, վորը կենդանի եյակներին կապում և իրենց շրջապատող որբանական և անորգանական աշխարհի հետ (կոնկրետ պատկերացումներով՝ անտառի, մարգագետնի, անապատի կյանքի և այլ որինակներով):

Հատկանիշների տարբերվելը վորպես բնական ընտրության տարբեր ուղղությունների արդյունք: Միջակաձևների անհատացմանը վորպես կենդանական և բուսական աշխարհի անհատման պատճառ: Հասկացողություն որբանական աշխարհի «Եվոլյուցիոն ծառի» մասին: Ավելի պրիմիտիվ ձեփ որբանիզմների կենդանի մնալու պայմաններն ավելի բարձրական կողքին:

Եվոլյուցիան և հարմարվածության լեռնույթները: «Նպատականիարմարությունը» որբանիզմների կաղմության մեջ վորպես ամենից ավելի հարմարվածների գոյության և յերկար ապրելու համար մղվող պայքարի արդյունք: Տիպիկ հարմարվածության որինակներ (կենդանիների պաշտպանողական գունավորումը, մասնագիտացված ձեւերի կազմությունը, ծաղիկների և նրանց բեղմանավորողների փոխադարձ հարմարվածությունը): Նպատականաբ-

մարության պատմականությունն ու հարաբերական բնույթը և նրա անցումը իրեն հակադրության՝ գոյության փոփոխվող պայմաններում (որինակներ՝ խայթոցով և նախարլուշացնող գունավորությամբ պաշտպանվող միջատներ, վորոնցով կերակրվում են դուռները և թռչունները (խաչկառւցները), «չուսվող» բըրգոտ թրթուրները, վորոնք կուլ են զնում կուռներին և հեծյալներով վարակվելուց վոչնչանում: Բրածո գինուղավրերի և նախաթուչունների կաղմության առանձնահատկությունները, վորոնք բավարարում են միջավայրի պահանջները նախորդ կեռողիական ժամանակաշրջանում, բայց և հետագայում նրանց ժամանեցին կորասի: Հողից վոչ պահանջնությունը՝ «պիտունները», վորոնք հետո զուրս են մզվում շվաքին ավելի դիմացկուր բույսերի կողմէց և այլն):

Որդանական «նազատակահարմարության» նկատմամբ Դարվինի տեսության կողմէց տրված մատերիալատական բացատրությունը վորպես ուժեղ վիաստարկում այդ տեսության մետաֆիլիկի կրոնական մեկնարանման և լամարկիզմի վորով վիտալիստական բացատրությունների գեմ:

Դարվինիզմի նշանակությունը և նրա դիալեկտիկ-մատերիալիստական ընդհանուր հիմունքը՝ պարզինիզմի զնահատականը մարքսիզմի հիմնադիրների կողմէց (Մարքսի, Ենգելսի, Լենինի) և Դարվինի ուսմունքի մասնակի ուղղումները՝ մտցված մարքսիստական քննադատության կողմէց: Դարվինիզմի հանդեպ յեղած վերաբերմունքը բուրժուատական յերկրներում: Ուղղակի պարզաբան և իմպերիալիստական քաղաքականության, դաստկարային տիրապետության ու աղքային ճնշման «դիտական» հիմնավորման համար այն ողտագործելու վորձերը:

### ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՅԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ (14 ԺԱՄ)

Ժառանգականության որինաչափությունները և նրանց նշանակությունը եվոլյուցիայի պարցեսը համարական և դյուզատնեատթյան ոլրակտիկայի համար; Մենդելի աշխատանքը սիսեռի հետ: Մենդելի յերեք հիմնական կանոնները՝ դերակշռության, ճեղքման և հատկանիշների անկախության կանոնները: Մոնոհիբրիդային և դիհիբրիդային խաչաներումը: Հատկանիշների նոր կոմբինացիաներ ստանալը դիհիբրիդային և պոլիհիբրիդային խաչասերման դեպքում:

Ժառանգականության քրամուկումային աեսությունը վորպես Մենդելյան որինաչափության նյութական հիմնավորում: Ժառանգականից կիսության կողմէց Մենդելի կանոնների մեջ մացը ված ուղղումները (վոչ լրիվ կերակրակառություն, կապակցված հատկանիշներ և այլն): Համկացողություն գենի մասն. գենի և հատկանիշի նույնացման վոչ ձիւ լինելը. որպանիզմի հատկանիշների զարգացումը վորպես գենի և որպանիզմի մյուս մասերի փոխազդեցության արդյունք: Գենոտիպ և Փենոտիպ. այդ համկացողությունների տարրերման անհրաժեշտությունը և նրանց հակադրման սիստիմնելը (Փենոտիպը վորպես գենոտիպի «հաղուստ» հատկանալու դեպքում): Ժառանգական փոփոխությունները (մուտացիա) վորպես գենի փոփոխման արդյունք. մուտացիայի արտացընթացումը (Մյուլերի վորձերը): Բնարությունը և հետական սուաջացումը (Մյուլերի փոփոխման անկախության վորպես բույսերի և կենդանիների նոր ձեւեր հիբրիդացիան վորպես բույսերի և կենդանիների նոր ձեւեր սահմանալու մեջողները: Խորհրդային սելեկցիայի կարևորագույն սննդամումները բուսաբուծության և անասնաբուծության բնակչության պահպանում (ի. վ. Միջունինի և սելեկցիոն կայանների աշխատանքը՝ կազմակերպությունների ները. կենդանիների հիբրիդացիայի և ակլիմատիզացիայի ինստիտուտի աշխատանքները):

Այսպես կոչվող ձեւեկան գենետիկայի մեթոդների պակասությունը՝ կապված զարգացող որդանիզմի մնացած մասերից գեների անկախության մասին և Փենոտիպիկ փոփոխականության ահմանների հատակառության մասին յեղած սպատկերացման հետ: Որդանիզմների բնության ձեւագրիման խորիները՝ բուսական և կենդանական ձեւերի զարգացման որինաչափության ուսումնասիրման հիման վրա. ակադ. Տ. Լիսենկոյի աշխատանքները:

### ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ (7 ԺԱՄ)

Մարդու ծաղումը կենդանական ստորին ձեւերից. համեմատական անատոմիայի, համեմատական Փիլիպուրգիայի (արյուն) և սաղմնաբանության տվյալները: Մարդու գիւղը կենդանական աշխարհի սիստեմում. պրիմատների կարգը: Մարդանման կապիկ-խարության անկախության կանոնը: Մարդանման կապիկ-ները վորպես ժամանակակից ձեւերի մեջ մարդու ամենամուտիկ աղջակեցից: Մարդու և ժամանակակից մարդանման կապիկների

մարդնի կազմության նմանությունն ու տարբերությունը . կապիկ պանդի, վողնաշարի, կոնքի և վերջավորությունների առանձնահատկությունները մարդու համեմատությամբ : Ժամանակակից կապիկների մասնագիտացման բնորոշ զծերը, վորոնք զրկում են մեղ հնարավորությունից նրանց համարել մարդու նախաձեռք :

Մարդու բրածո նախնիները : Գիտելիքնարուղը վորպիս մարդու և կապիկ միջև շաղկապող ողակ, —մի ձեւ, վորի մարմինը արգեն ընդունել եւ ուղղաձիգ դիրք և վերին ու ներքին վերջավորությունների միջև կատարված Փունկցիաների բաշխում : Սինանտրոսը վորպիս մարդացման հետագա աստիճան . պրիմիսիվ վործիքներ պատրաստելու նրա ընդունակությունը : Հայոցլրերպատան ծնուն : Եւանդերթալլայն «Խախամարդու» և նրա լայն տարածումը : Կրոմանյոնի մարդը վորպիս ժամանակակից «գիտակից մարդու» հանուն ձեւ, նրա տեխնիկայի ավելի նշանակալից կատարելազործվածությունը :

Աշխատանքի դերը հնադարյան կապիկ մարդացման պրոցեսում : Տեղափոխության միջացների յեղանակի (ձեր) փոփոխությունը (ուղիղ քայլվածք) և վերին ու ներքին վերջավորությունների փունկցիաների լրիվ բաժանումը վորպիս կապիկ մարդու անցնելու մճուական քայլ : Մարդու նախահայրերի հոսորյին կենսակերպը վորպիս մարդկային հասարակության տառչացման անհրաժեշտ նախադրյալ : Գործիքների պատրաստումը և աշխատանքը վորպիս մարդկային հասարակության հիմնական բնորոշ զիծ : Խոսքի ծագումը վորպիս միասեղ աշխատանքի առաջացած «միմյանց ինչ վորքան ասելու սպահանջ» (Ենգելս) : Զեռքի, խոսքի որդանի և ուղեղի միասեղ աշխատանքը վորպիս «միշտ ավելի բարդ գործողություններ կատարելու, իրեն ավելի բարձր նպաստակներ զնելու և նրանց հասնելու ընդունակություններ» (Ենգելս) ձեռք բերելու սպատճառ :

Գոյության կոխվը կենդանական և բռուական աշխարհում և զասակարգային սպայքարը մարդկային հասարակության մեջ : Արգանական աշխարհի եվլոյուցիայի զարգինային կենսաբանական որենքները մարդկային հասարակության մեջ փոխադրելու սիստմինը : Այսպիս կոչված «սոցիալական զարգինիզմը» և նրա դասկարգային հիմքը : Մարքուղիմը զարվենիզմի հետ նույնացնելու անթույլատրելիությունը :

### ԿՅԱՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ (3 ԺԱՄ)

Կյանքի ծաղման հարցը : Ինքնածնության ուսմունքը հնում և նոր ժամանակներում : Պաստյորի աշխատանքները և նրանց կարևոր գիտական ու դորձնական նշանակությունը : Պաստյորի փորձերի արդյունքների ընդարձակ մեկնարանման անթույլատրելիությունը :

Կյանքը վորպիս նյութի նոր վորակ, վորը պատմականորեն առաջացել եւ յերկրագնդի վրա բնականորեն ընթացող փոփոխությունների պրոցեսում : Պայմաններ, վորոնցում կազող ելին յերկրի վրա առաջնալ բարդ որգանական միացություններ : Ժամանակակից քիմիայ կենսաբանական հիպոթեզները կրանքի ծագման մասին : Կենսական յերելույթների սպեցիֆիկության դիմելեկտիկ մատերիալիստական ըմբռնումը վորպիս հակազիա կենսական յերելույթները Փիդիկայի և քիմիայի յերելույթներին հավասարեցնելու հնարավորության մասին, մեխանիստական հայցքների և «կենսուժի» մասին՝ պիտալիստական պատկերացումների :

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Ա. ՍՈՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԵԼՅԱՅԵՎ, Մ. Մ. — Եվոլյուցիոն ուսմունքի հիմունքները: Դասագիրք  
միջնակարդ դպրոցների համար, Ռուչպետիկ, 1937թ.:

ԳԵՍՍԵ Ա. — Տիտակների ժագումը և Դարվինիզմ: Մ. Մ. Մհատերգագի  
լրաց, 1936թ.:

ՏԻՄԻՐՅԱՅԵՎ, Կ. — Զարդ Դարվինը և նրա ուսմունքը (մի շաբք հրա-  
մարակ):

ՏԻՄԻՐՅԱՅԵՎ, Կ. Ա. — Դարվինիզմը և սելեկցիան, Սելիմոգիկ, 1937թ.:

ԵՎԳԵԼԻ Ֆ. — Աշխատանքը գերը կապվի մարդացման պրոցեսում (իս  
առանձին հրատարակություն):

ԳՐԵՆԵՎՈՎԻ Պ. — Մարդու ժագումը: Հրատ. «Աթեմա», 1929թ.

### Բ. ՈՒՍՈՒՑԻՉՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵԵԼՆԻԿՈՎ, Մ. Ի. ՅԵՆ, ՇԻԲԱՆՈՎ, Ա. Ա. — Եվոլյուցիոն ուսմունքի մե-  
թոդիկա, շրջ հրատ, Ռուչպետիկ 1937թ.:

ՏԻՄԻՐՅԱՅԵՎ, Կ. Ա. — Պատմական մեթոդը կենսաբանության մեջ  
(բացի նախկին առանձին հրատարակության, այս աշխատանքը ամբողջու-  
թյամբ մտել է «Զարդ Դարվինը և նրա ուսմունքը» նոր բուհական հրատարա-  
կության դրբի մեջ, 1937թ.):

«ՄԻՇԱԽԻՆԸ ՅԵՆ» ԳԵՐՎԻՆԻ ՀԱՅՐԱՅԻՆ ՓՈՐ - Ժող, ակադ. Բ. Ա. ԿԵԼԵՐԻ խմբա-  
գրությամբ, Սելիմոգիկ, 1937թ.:

ԲԱՐՈՒԵՐ Ե. — (Խմբ.) Բնդիանուր կենսաբանություն, Ռուչպետիկ, 1937թ.:

ԲԼՅԱԽԵՐ Լ. ՅԵՆ. — (Խմբ.) Բնդիանուր կենսաբանություն, Բիոմեդիկ, 1936թ.:

ԵԵԼՆԻԿՈՎ, Ա. Ն. — Եվոլյուցիոն պրոցեսի գլխավոր ուղղությունները,  
Բիոմեդիկ, 1934թ.:

ՆԵՍՏՈՒԻՆ Մ. Ֆ. — Մարդը և նրա նախնիները: ԳԱՐ, 1934թ.:

ՄԱՐՔՄ, ԵՆԳԵԼԻ, ԼԵՆԻՆ. — Կենսաբանության մասին (ժողովածու):  
Կուտարատ, 1936թ.:

ԱՊԱՐԻՆ Ա. Ի. — Կանքի առաջանալը յերկրի վրա: Բիոմեդիկ, 1936թ.

## ԳԵՂԼՈԳԻԱ ՅԵՎ ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱ

### Բացատրական

Գեղլոգիայի և միներալոգիայի ծրագիրը կազմելու ժամա-  
նակ ուշադրության են առնված նախ այն տեղեկությունները,  
որոնք սովորողները ձեռք են բերել ֆիզիկական աշխարհագրու-  
թյան դասընթացից՝ յերկրագնդի ձեր և չափերի, նրա ֆիզիկա-  
կան հատկության, ցամաքի գեոմորֆոլոգիայի, ովկենագրության  
և ողերեսութաբանության մասին: Յերկրագի դասընթացին հատ-  
կացված ժամերի քությունն ստիպել ե ընտրել շարադրվող գի-  
տությունների միայն ամենահիմնական մոմենտները:

Դասընթացի խնդիրները հանդում են յերեք հիմնական պահանջ-  
ների. 1. տալ սովորողներին ընդհանուր պատճերացում յերկրի կե-  
ղելում կատարվող գեղլոգիական պրոցեսների, ինչպես նաև նրա  
պատմության հիմնական մոմենտների մասին. 2. հազորգել նրանց  
ամենատարածված միներալների և ապառների մասին գործնական  
գիտելիքների մի փորոշ (բացարձակապես անհրաժեշտ) գումար.  
3. տալ նրանց նորյանես ամենաանհրաժեշտ (գործնական և  
ակտուական) գիտելիքներ ոգտակար հանածոների հիմնական տիպե-  
րի մասին՝ կապված գեղլոգիական պրոցեսների ընդհանուր  
ընթացքի հետ, նրանց ծագման ժամանակի և ԽՍՀՄ տերիտո-  
րիայում նրանց տարածման մասին:

Ներկա ծրագիրը գործնականորեն իրավործելու ժամանակի  
անհրաժեշտ և նկատի ունենալ, փոր նրանում հաղորդվող նյութը  
կարող ե լավ մշակվել և յուրացվել միայն այն պայմանով, յե-  
թե յուրաքանչյուր սրբեկտ (միներալ կամ ապառ) կուսումնա-  
սիրվի վոչ միայն «գլոբով» կամ գասատվի ասածներով, այլ ա-  
մենից առաջ կմշակվի բնական նմուշների վրա: Այսպիսով՝ դաս-  
ընթացի 3/4-ն ըստ եյտթյան գործնական աշխատանքներ են նրա առկա-  
յությունը:

Այսայն միայն լոբորատորական աշխատանքը դեռևս բա-

վական չե: Ըստ ծրագրի աշխատելու ժամանակ լավագույն արդյունքներ կստացվեն այն դեպքում, յերբ սովորողը կկարողանա ճանաշել որյեկտներն ու դիտել պրոցեսները զոչ միայն լարութափարում, այլ և անմիջականորեն բնության մեջ: Այստեղից բղկառմ և ամառային գաշտային երսկուրսիաների անհրաժեշտությունը գեղագիտայի և միներալոգիայի զծով՝ զոչ պահան քան 2—3 որ տեղողությամբ: Այդ եքսկուրսիաները ծրագրի մեջ չեն մտցված (քանի վոր գասընթացի տեսական մասի համար ժամանակ չեր մնա), բայց և այնպես զբանք պետք և կաղմեն անցնելիք առարկայի որդանակալեն և բացարձակադրեն անհրաժեշտ մասը:

Գեոլոգիան, ինչպես նաև ընդհանրապես բնագիտությունը, չափազանց ոերտ կապ ունի գավառագիտության հետ և վորոշ չափով կարող և տարվել զավառագիտական նյութերի վրա: Մրագրում արդ չի արտացոլված, վորովհետեւ նա պետք և տա պարտագիր մի վերոշ մինհմում, վոր պարտագիր և ըստ ամենայնի: Բայց և այնպես բարորովին սեալ կլիներ, էթեն ներկա գասընթացի ուսուցիչը նրա մեջ չարտացոլեր տեղական յերկրային սուանձնահատկությունները: Գավառագիտական տարրերը հնարավոր և գետեղել դասընթացի տեսական մասն անցնելու ընթացքում: Բայց նա առանձնապես մեծ նշանակություն և ստանում դաշտային եքսկուրսիաների ժամանակ: Այսպիսով, եքսկուրսիաները կարենու են յերկու տարրեր մոտիվներով՝ նախ, վոր նրանք կողնեն, ինչպես պետքն և, տիրապետելու այն տեսական նյութին, վոր առաջ սովորել են, և յերկրորդ, վոր նրանք ներկայացնում են այն բնական հունը, վորով պետք և բերդին և սպառքովն տեղական գավառագիտական նյութերը, վորոնք լրացնում և աշխատացնում են գասընթացի ընդհանուր տեսական մասը:

## ՄՐԱԳԻՐ (40 ԺՄ)

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասկացողություն միներալոգիայի և գեոլոգիայի մասին, վորպես յերկրի կեղեղն ուսումնասիրող գիտությունների: Այդ գիտությունների տեսական և գործնական նշանակությունը: Գեոլոգիայի դերը մեր յերկրում սոցիալիստական շինարարու-

թյան հերկա ետապում՝ վորպես գիտության մի բնակավարի, վորըն ուսումնասիրում և շինարարության հանքային ուսումները:

## I. ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱՅԻ ՀԽՍՈՒՆՔՆԵՐԸ

Միներալ և ապատ: Միներալի բնութագրումը մորֆոլոգիական և քիմիական տեսակետից: Հասկացողությունը բյուրեղային ձեւի մասին: Բյուրեղաների սիմետրիան: Միմետրիայի ելեմենտները՝ սիմետրիայի հարթությունը, առանցքը, կենտրոնը: Բյուրեղային գասակերը և սիստեմները: Վորոշել սիմետրիայի ելեմենտները նախնական ձեւերի վրա՝ խորանարդ, ոկտաեդր, տետրաեդր, հեկտապոնային պրիզմա:

Միներալների ֆիզիկական հատկությունները՝ կարծությունը (կարծրության շեալան), տեսակարար կեիռը, փայլը, դուրսը:

Միներալների քիմիական հատկությունները՝ իդոմորֆիզմ և ալոլիմարֆիզմ: Հասկացողություն միներալների քիմիական առակի մեթոդների մասին:

Միներալների գենեղիսը: Յերկրի կեղեղի քիմիական կաշմությունը: Եեթու գենեղիսը տարածված գլխավոր ելեմենտները (առաջին մեկ ու կես տասնյակը): Թթվածնի, սրբիցիտմի, ալյումինիումի և նրանց միացությունների դերը յերկրի կեղեղի կաղմության մեջ:

Հասկացողություն միներալների կասիֆիկացիայի հիմունքների և գլխավոր խմբերի մասին՝ ելեմենտներ, սքսիդներ, հիդրատներ, աղեր, սուլֆիտաներ:

Ամենազլակագոր միներալների հակիրճ նկարագրությունը և պրակտիկ ուսումնասիրությունը (քիմիական բաղադրությունը, ձեւը, ֆիզիկական հատկությունները, առաջացումը, կիրառումը տեխնիկայում):

Կվարց: Հիդրատներ ՏՕ:

Դաշտային շպատ: Դաշտային շպատի հողմանարումը: Կառլին: Փայլար:

Հնդհանուր հասկացողություն մետասիլիկատների և որթոսիլիկատների մասին: Յեղներային պատրանք:

Կալցիտ: Դոլմիտ:

Ապատիտ: Ֆոսֆորիտ:

Գիպս, քարաղ, կալիումական աղ:

Պիրիտ: Խալկոպիրիտ: Գալենիտ: Պելիմետաղական հանածոներ:  
Մուգ շագանակագույշ յերկաթաքար: Կարմիր յերկաթաքար:  
Մագնիսական յերկաթաքար: Պիրոլուզիտ:

## II. ԳԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏՎԱՆՔՈՒ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՊԱՌՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

### 1. ՀՐԱԲԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՄԱԳՄԱՏԻԿ ԱՊԱՌՆԵՐ

Ժամանակակից հրաբուխների ժայթքման պրոցեսների ընդհանուր բնութագիրը: Ժայթքումների՝ պրոցեսները՝ մոխիր, լավա, գագեր: Հրաբխի հանդման ստաղիաները՝ սոլֆատորներ, մոֆեններ: Հասկացողություն մագմայի ինտրուզիայի (խորքի ապառներ) և եփփուզիայի (մակերևուի ապառներ) մասին:

Մագմատիկ ապառների ընդհանուր բնութագիրը: Մագմատիկ ապառների ստրուկտորան՝ ապակենման, լրիվ բյուրեղային, պրոֆիլային, պղպջակավոր: Նրանց առաջացման պայմանները:

Մագմատիկ ապառների քիմիական կտզմությունը: Ապառների գասակարգումն ըստ խմբերի՝ թթվային, չեղոք, հիմքային, և նրանց գլխավոր ներկայացուցիչները (գրանիտ և լիպարիտ, զարբը և բաղալտ): Մագմատիկ ապառները վորոշելու մեթոդը:

Հրաբխային տուփեր և նրանց առաջացումը հրաբխային մոխրից, և նրանց տեսակները: Արթիկ տուփո—լավան և նրա շինարարական հատկությունները:

Հրաբխային ապառների հետ կապված ոգտակար հանածոներ (հանքեր): Նրանց բաժանումն ըստ թթվային և հիմքային ապառների: Մագմային անջատումներ՝ պլատին, ապատիտ (նիրինյան հանքեր), խրոմիտ, մագնիսական յերկաթաքար (Ուրալ, Անդրկովկաս, Տաշքենդ): Հասկացողություն պեղմատիտների, նրանց առաջանալու և նրանց հետ կապված ոգտակար հանածոների մասին (փայլար, հազվագյուտ ելեմենտներ, թանգարժեք քարեր): Վլաստանի Զիրուլի մասսալիկը: Հասկացողություն հիդրոթերմային պլոտենների և նրանց հետ կապված ոգտակար հանածոների մասին (Աս, Ագ, Հ.ՀԱ, ԶnԱՏ.Տn' V, Mo և այլն: Ազալերի, Ղալան, Փիրղոսուղան, Աղարակ):

## 2. ՄԱԳՄԱՏԻԿ ԱՊԱՌՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ. ՆՏՎԱԾՔԱՅՅԻՆ ԱՊԱՌՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՄՐԱՆՑ ՏԻՊԵՐԸ

Ֆիզիկական և քիմիական հողմնահարում: Հողմնահարման Փակուրները: Գրանիտի, դաշտային շպատի, վայլարի հողմնահարումը, պիրիտի ոքսիդարումը: Որդանական հողմնահարում:

Քայքայման պրոցեսների տեղափոխությունը և նրա դիստվոր աղբնաները: Տեղափոխման գեոլոգիական գործոնների քայքայիչ և շինարար գործունելությունը:

Նստվածքային ապառների ստովացումը. նստվածքների կուտակման սայոնները՝ ծով, լիճ (գետաբերաններ) և դետերի հովիտները: Նստվածքային ապառների տիպերը: Ելյուվիալ նրանց վածքներ (բոքսիտներ, լատերիտներ): Բեկորային ապառներ՝ խիճ, ձալաքար, ավազ, մանրախիճ, կոնգլոմերատներ, ավաղաքարեր, կավեր, մերգելներ, լյոսս: Որդանողեն ապառներ՝ կրաքարեր (Փորամինիֆերային և խեցային), կավիճ, դոլոմիտներ, տրետել, տորֆ, սաղրոպել, քարածուխ, նալթ, այրվաղ թերթաքարեր, ֆոսֆորիտներ: Քիմիական ծագումի նստվածքներ՝ դիպս, անհիդրիտ, քարագ, կալխական աղեր:

Նստվածքային ապառների կիրառումը տեխնիկայում և դյուզատնեսակալության մեջ (շինանյութեր, վառելիք, պարարտանյութ, քիմիական հումուր):

### 3. ՅԵՐԿՐԻ ԿԵՂԵՎԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԵՏԱՄՈՐՖԻԶՄԻ ՊՐՈՑԵՍՆԵՐԸ

Յամաքի բարձրացման և իջման ապացույցները ներկայումս (ծովափինյա տերրասները, գետերի հունի ընդուվյա շարունակությունը և այլն) և անցյալում (ծովափին և ցամաքային նստվածքների լողակատումը կտրվածքներում): Յերկրի կեղեվի շարժումների եալիունիկ և որոգենիկ տիպերը: Որոգենեղիսի ժամանակ առաջացած ստրուկտորաների ծեվերը՝ ծալքեր, վրաշարժեր, իջվածքներ, Փելկուրաներ: Սեյսմիկական յերեվույններ:

Ապառների մետամորֆիզմը և նրա Փակտորները՝ ճնշում, չերմություն (տեմպերատուրա), լուծույթների շրջանառությունը:

Մետամորֆիզմի հետեւանեները՝ բյուրեղային թերթաքարերի, կվարցիտի, մարմարի, գնեյսի առաջացումը: Հասկացողությունների որթողնեխների և պարագնեների մասին:

### III. ՅԵՐԿՐԻ ԿԵՂԵՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՅԵՐԿՐԻ ծագումը : Կանսի և Լավլասի, Զինսի և Զափեյսի կոսմոգնիկ տեսությունները : ՅԵՐԿՐԻ կեղեվի և Հիոլուսի ֆերայի ձևակերպումը . կյանքի յերելալը : Հասկացողություն յերկրի և նրա թաղանթների կազմության մասին :

ՅԵՐԿՐԻ պատմության գեղողիական շրջանի հիմնական ստորաբաժանումները՝ արխեյան, պաշեղողյան, մեղողյան և էլայնողյան երաներ :

Սկզբունքներ, վորոնց հիման վրա սահմանված են այս ստորաբաժանումները . հասկացողություն ստրատիվրաֆիական և պաւենուլոդիական մեթոդների մասին :

ԱԲԽԵՑԱՆ ԵԲԱ : Այս ժամանակիա ազգանները (բյուրեղային թերթաքարեր) և նրանց առաջացման պայմանները : Կյանքի ելոլյուցիան արխեյի ընթացքում : Լեռնակարգմական պրոցեսներն արխեյան երայում և նրանց արդյունքները . յերկրի կեղեվի յերկատումը հաստատուն (պլատֆորմաներ) և պլատոնիկ մասերի (որոգեններ և գեոսինիլինալներ) : Ռուսական և սիրիական պլատֆորմները . նրանց գրանիվորումը քարտեզի վրա : Հասկացողություն մանացած ոլլատֆորմների մասին :

ՊԱԼԵՈԶՈՅԱՆ ԵԲԱ : Երայի ստորաբաժանումը պերփողների՝ կեմբրի, սիլուրի, գելոնի, քարածինի, սկերմի : Բուսական և կենդանական կյանքի ելոլյուցիան պալեոլոգյան երայի ընթացքում : ՅԵՐԿՐԻ կեղեվի շարժումների ընդհանուր ընթացքը (տրանսլրեսսիաների և ուժգրեսիաների դարդացումը) : Կալեզոնյան և վարիանյան ծալքավորումներ և նրանց հանդես գալը տարածության մեջ և ժամանակի ընթացքում : Պալեոլոգյան լեռնակաղմությունների որինակներ Միության տերիտորիայում՝ Ուրալ, Ֆիմանյան թումբ, Միջն Ասիայի լեռները, Ալտայը և այլն : Դուրսասի, կուղբասի, կարաղանդայի և Միության հանքավայրերի չիմնական մասսայի՝ Ուրալի, կաղակստանի և այլոց առաջացումը :

ՄԵՐՋՈՅԱՆ ԵԲԱ : Երայի ստորաբաժանումները տրիաս, յուրա և կավճային պերփողների : Բուսական և կենդանական աշխարհի ելոլյուցիան մեղողյան երայում : ՅԵՐԿՐԻ կեղեվի զարժումը (տրիասի սիլրեսիան, յուրայի և կավճային տրանսլրեսիաները) :

Տրիաս, յուրա և կավճային պերփողների նստվածքների ուղիւնական նշանակությունը ԽՍՀՄ-ում (քարաղ, գիպս, քարտածուկներ, այրվող թերթաքարեր, լիտոգրաֆիական թերթաքարեր, հրատուկուն կավեր, նալթ (Եմբա) , Փոսփորիսներ, կավիճ և այլն) : ԿԱՅՆՈՅՉՈՅԱՆ ԵԲԱ : Հասկացողություն ալպյան ծալքավորման մասին . նրա հանդես գալը ժամանակակից մասին . նրա հանդես գալը ժամանակի և տարածության մեջ : Ալպյան լեռնաշղթաների առաջացումը : Նրանց որինակները ԽՍՀՄ-ի տերիտորիայում (Ղրիմ, Կովկաս, Կոպետ-դաղ, Պամիր, Մոնղոլա-Ուսուոյան գոտի) : Կայնողոյան երայի ստորաբաժանումը յերրորդական և չորսրորդական պերփողական պերփողների : Բուսական և կենդանական կյանքի ելոլյուցիան կայնողոյում : ՅԵՐԿՐԻ կեղեվի զարդացման վերջին մոմենտները . սառցաղաշտային ժամանակաշրջան : Մարդու հանդես գալը : Հասկացողություն բրածո սատաների մասին : Կայնողոյան երայի նստվածքների սպտակար հանածոները . Կովկասի և Ուկրաինայի յերկաթի և մանդանի հանածոները, նալթ (Բազու, Հյուսիսի կովկաս, Կովկաս, Կերչ, Թաման, Ֆերդանա, Թուրքմենան, Սախալին, Կամչատկա և այլն) :

ՅԵՐԿՐԻ կեղեղիական պատմության բացարձակ տեղողությունը և նրա առանձին ետապները (երաները) : Հասկացողություն այս տեղողության չափումների մեթոդների (գլխավորակես սաղիսութիվ մեթոդի) մասին :

Հիպոթեզներ և տեսություններ պատմար կեղեղիական պրոցեսի հիմնական սպատառուների մասին :

Լեռնակարգմության առաջին հիպոթեզները՝ վուկանիզմ և նեպտունիզմ . Զ. Լայելի աշխատությունները . կոնտրակտացիոն տեսությունը : Վեզեների տեսությունը : Զոլիի տեսությունը : Տեսությունների հակիրճ շարադրումը՝ հիմնական պակասությունների ցուցադրումով՝ դիալեկտիկ-մատերիալիստական տեսակետից : Հակակրոնական յեղակացություններ յերկրի պատմության դիտության մասին :

ՅԱՐԱԳՐԻՑՆԵՐ՝ Ա. ՅԵՐԻՑՅԱՆ  
Ա. ԲԱԼԱԲԱՆՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0999865

21 ОКТ. 1938.

494

ԳԻՒԾ 60 ԿՈՊ.

11  
30265